



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հուլիսի 2015 թվականի N Մ- 714 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Այբ» կրթական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հուլիսի
21-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. երևան 0009, Կորյունի փողոց, 19ա, ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատես-
ված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվա-
կանի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի
«Գ» մասնաշենքի կառուցում ծրագրի մասին» N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2015 թվականի հուլիսի 18-ին
կնքված N 101-Լ եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
պորտլանդցեմենտի ձեռք բերում՝ 53,666,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի
հարկի.

2) «Սթոուն Լենդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03530369) 2015 թվականի հուլիսի 18-ին
կնքված եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խիճի
մատակարարում՝ 13,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
23 հուլիսի 2015 թվականի N Մ - 715 - Ա
քաղ. երևան


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N Մ - 259 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Առողջ կյանքի ուղի»)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի հուլիսի 22-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունից «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված և ներմուծված բեռը (102 տեղ, 10,100 կգ ընդհանուր քաշով, 13,500 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 1,400 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 23-ի «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բժշկական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-259-Ա որոշմամբ (2009 թվականի դեկտեմբերի 11-ի N Մ-820-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-481-Ա և 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-092-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԻՇ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հուլիսի 2015 թվականի N Մ - 716 - Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հուլիսի 18-ի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Բարեգործական որակել «Ճարտարապետության և շինարարական կրթության աջակցության» հիմնադրամի կողմից «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի քիմիայի լաբորատորիայի համալրման համար ձեռք բերված տեխնիկական գազի երեք բալոն և ռեդուկտորների (194 կգ ընդհանուր քաշով, 88,500 ուսական ուրվուն համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հուլիսի 2015 թվականի N Մ-717-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՅՎՈՂ «ԽԱՂԱԴԱՇՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հուլիսի 22-ի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 328,098,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Խաղաղաշտերի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ձեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2015 թվականի հուլիսի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղաղաշտի հիմքերի նախապատրաստման և դրենաժային համակարգերի կառուցման աշխատանքների իրականացում՝ 90,912,040 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված ներքոհիշյալ ապրանքները ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) կվարցային ավազ՝ 125,000 կգ ընդհանուր քաշով, 6,875 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

2) ռետինե գնդիկներ՝ 46 տեղ, 46,920 կգ ընդհանուր քաշով, 7,398.40 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 11,200 եվրո, «Արարատյան» ՏՄ.

3) ռետինե գնդիկներ՝ 161 տեղ, 164,480 կգ ընդհանուր քաշով, 26,477.60 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 39,200 եվրո, «ՄՇՓ» ՏՄ.

4) արհեստական խոտածածկերի անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր՝ 145 տեղ, 8,278 կգ ընդհանուր քաշով, 55,832.50 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4,530.63 եվրո, «ՄՇՓ» ՏՄ.


5) մարզադաշտի արհեստական խոտածածկեր՝ 53 տեղ, 42,964 կգ ընդհանուր քաշով, 154,330 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 11,800 եվրո, «ՄՇՓ» ՏՄ:

4. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«10» հուլիսի 2015թ.

«Նաղաղաշտերի կառուցում»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացման նպատակով Երևանի և Վանաձորի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցների տարածքներում արհեստական խոտածածկով խաղադաշտերի կառուցում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, Ժնև) և Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Զյուրիխ)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվում է Երևան քաղաքի Ավան, Աճառյա 35/31 և Վանաձոր քաղաքի Տաթև 4 թաղամասի Մեքաստի 6 հասցեներում սպորտի բնագավառում:
6.	Ծրագրի բյուջեն	328,098,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Երևանի և Վանաձորի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015 թվականի հուլիսի 10-ից մինչև 2016 թվականի մայիսի 31-ը:

2

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Արհեստական խոտածածկի, անհրաժեշտ սարքավորումների և նյութերի ներմուծում 221,572,960 դրամ ընդհանուր արժեքությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, հուլիսի 10-ից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 31-ը: 2. Նաղաղաշտերի կառուցման նպատակով աշխատանքների իրականացում 90,912,040 դրամ 2015 թվականի հուլիսի 10-ից մինչև 2016 թվականի մայիսի 31-ը: 3. Արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքներ՝ 15,613,000 դրամ, 2015 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2016 թվականի մայիսի 31-ը:
10.	Ձևեր բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	- Հողային աշխատանքներ, դրնաժային համակարգով մարզադաշտերի կառուցում, հենապատերի և ցանկապատերի կառուցում՝ 90,912,040 դրամ, - Արհեստական խոտածածկի՝ 215,478 եվրոյին համարժեք դրամ, սպորտային սարքավորումների՝ 10,860 եվրոյին համարժեք դրամ, արհեստական խաղադաշտի մշակման տեխնիկայի՝ 22,000 եվրոյին համարժեք դրամ (բեռնափոխադրման ծախսերը կազմելու է 18,300 եվրոյին համարժեք դրամ (բեռնափոխադրման համարժեք դրամ (բեռնափոխադրման ծախսերը կազմելու է 58,000 եվրոյին համարժեք դրամ), գնդակահարի՝ և դրնաժային խողովակ-ների՝ 9,320 եվրոյին համարժեք դրամ, ռետինապատ ալյումինե ցանցի՝ 25,200 դոլարին համարժեք դրամ, ավազի՝ 12,500 դոլարին համարժեք դրամ (ներառյալ բեռնափոխադրումը), ներմուծում - Արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքներ՝ 28,387 եվրոյին համարժեք դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի և Վանաձորի քաղաքապետարանների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից:

Իրավաբանական և կադրերի բաժնի պետ Լուսինե Բակույան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հուլիսի 2015 թվականի N Մ-718-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հուլիսի 20-ի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Բարեգործական որակել Դանիական Միջմշակութային ծրագրերի ասոցիացիայի (CCPA) կողմից Հայաստանում ֆուտբոլի զարգացման նպատակով իրականացվող Բաց զվարճալի ֆուտբոլային դպրոցներ միջոցառումների համար «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված գնդակների (2,100 հատ՝ 70 տեղ, 966 կգ ընդհանուր քաշով, 8,647.85 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԻԼ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հուլիսի 2015 թվականի N Մ-719-Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-133-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի հուլիսի
22-ի համաձայնեցման թերթը, որոշում է.*

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված արհեստական խաղաղաշտի խնամքի պարագաները, նյութերը և տրակտորը (5 տեղ, 2,502 կգ ընդհանուր քաշով, 33,118 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,369.37 եվրո, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-133-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
24 հուլիսի 2015 թվականի N Մ- 720 -Ա
քաղ. երևան

**«ՎՈՐԼԴ ՎԻՃԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ,
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐԻ 131 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հուլիսի 24-ի N 07/80-2/19706-15 և հուլիսի 23-ի N 06/3-3/19587-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 02/14/8955-15, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2015 թվականի հուլիսի 24-ի N 01/02.3/10544-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հուլիսի 24-ի N ՋԲ/ԱՆՄ-2-1/6520 -15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով 2015 թվականի հուլիսի 23-ի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիճի Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 84,623,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Ամառային ճամբարի կազմակերպում Հայաստանի Հանրապետության Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի 131 համայնքների երեխաների համար» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ Վիճի Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի

զգալի նշանակություն՝

«Նորայուսին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08602616) 2015 թվականի հուլիսի 6-ին կնքված N WVA/ADPs/SC-15/001/LOT3,4,5,7/FY15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճամբարի կազմակերպում՝ 84,623,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ Վիճի Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզպետներին:



ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**«Ամառային ճամբարի կազմակերպում 22 Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի
131 համայնքների երեխաների համար»
ՄՐԱԳՐԻ**

1	Մրագրի նպատակը	22 Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի հարյուր երեսունմեկ համայնքների, 9-13 տարեկան երեխաների ներգրավում նշված մարզերում իրականացվող երեխայի բարեկեցության (կրթություն, առողջապահություն, երեխաների պաշտպանություն, քրիստոնեական դաստիարակություն) ուղղված ծրագրերում, երեխաների ֆիզիկական զարգացում և ակտիվ հանգստի կազմակերպում ամառային ճամբարում:
2	Մրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության աջակցող գրասենյակներ. <i>ԱՄՆ աջակցող գրասենյակ</i> Հասցեն՝ 34834, Վեբերուգեր, Վեյ Սաութ, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռ.: 1-888-511-6548 <i>Կանադայի աջակցող գրասենյակ</i> Հասցեն՝ 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada, հեռ.: 1-866-595-5550 <i>Թայվանի աջակցող գրասենյակ</i> Հասցեն՝ 65, 133, Մին-Շենգ Իստ Ռոադ, Թայպեյ 105, Թայվան, հեռ.: +886-2-2175-1995 <i>Շվեյցարիայի աջակցող գրասենյակ</i> Հասցեն՝ Kriesbachstrasse 30, 8600 Dubendorf, Switzerland, հեռ.: +41 44 510 1515 <i>Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ</i> Հասցեն՝ Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR UK, հեռ.: +44 1908 841000 <i>Ֆրանսիայի աջակցող գրասենյակ</i> Հասցեն՝ 7 րուե Փասքուիր, 75008, Փարիզ, Ֆրանսիա, հեռ.: +01 49 49 11 12
4	Մրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փող. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝ +37410749146
5	Մրագրի իրականացման վայրը և բնագավառը	22 Կոտայքի մարզ, գ. Հանքավան Բնագավառը՝ կրթական

6	Մրագրի բյուջեն	Մրագրի ընդհանուր արժեքը կազմում է 84,623,000 (ութսունչորս միլիոն վեց հարյուր քսաներեք հազար) 22 դրամ առանց ԱԱՀ-ի:
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի «Երեխաների Աջակցության» ծրագրում գրանցված, 22 Շիրակի մարզի Գյումրի, Մարմաշեն, Հովունի, Ամասիա, Աշոցք, Մեծ Սեպասար, Կամո, Բյուրակն, Արտեմի, Նոր Արթիկ, Սուսեր, Ցամաքասար, Զարինջա, Հացաշեն, Թաթուլ, Դաշտաղեն, Գառնահովիտ, Մաստարա, Ոսկեթառ, Զովասար, Կարմրաշեն, Ակունք, Եղնիկ, Դավթաշեն, Կաթնաղբյուր, Իրինդ, Վերին Սասնաշեն, Ներքին Մասնաշեն, Աշնակ, Վերին Բազմաբերդ, Ներքին Բազմաբերդ, Կաթավաձոր, Ագարակ Ափնա, Նիգավան, Սարալանջ, Լուսազուղ, Մուլքի, Վարդենիս, Չքնաղ, Թթուջուր, Չորագյուլիս, Քուչակ, Եղիպատրուշ, Ծաղկաշեն, Արագած, Շենավան, Հարթավան, Երևաշատի, Արայ, Այաբան, Վարդենուտ, Շողակն, 22 Գեղարքունիքի մարզի Օովազարդ, Լճափ, Բերդկունք, Հայրավանք, Գավառ, Գանձակ, Օաղկաշեն, Գեղարքունիք, Մարուխան, Լանջաղբյուր, Նորատուս, Կարմիր, Ճամբարակ, Օովազուր, Դրախտիկ, Շորժա, Աղբերք, Վահան, Թթուջուր, Մարտունի, Գետիկ, Կալվան, Այգուտ, Դպրաբակ, Չորավանք, Անտառամեջ, Կոտական, Տրետուր, Ագատ, Շատվան, Նորաբակ, Արեգունի, Ավազան, Այրք, Կարճաղբյուր, Օափաթաղ, Դարանակ, Փամբակ, 22 Սյունիքի մարզի Գորայք, Մառնակունք, Անգեղակոթ, Շաղատ, Շաքի, Բոնակոթ, Աշոտական, Աղիտու, Շամբ, Դարբաս, Լոր, Հարժիս, Շինուհայր, Խոտ, Հալիձոր, Քարահունջ, Կապան, Ագարակ, Անտառաշատ, Արծվանիկ, Դավիթ Բեկ, Գեղանուշ, Գեղի, Օխտար, Սյունիք, Տանձավեր, Օավ, Վերին Խոտանան, Վահանավանք, Եղվարդ համայնքների 2002-2006թթ. ծնված, սոցիալապես անապահով ընտանիքների 2,198 երեխաներ, ընդ որում ըստ մարզերի.
8	Մրագրի իրականացման տևողությունը	06 հուլիսի 2015թ. - 31 օգոստոսի 2015թ.



Մարզ	Երեխաների թիվը	Երեխաների տարիքային խումբը
Շիրակ	720	9-11 տարեկան
Արագածոտն	348	10-12 տարեկան
Գեղարքունիք	600	9-13 տարեկան
Սյունիք	530	9-11 տարեկան
Ընդամենը	2,198	

9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Օրագրի շրջանակներում նախատեսվում է 2015թ. հուլիսի 06-ից մինչև 2015թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում ամառային ճամբար կազմակերպել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի շահառու 131 համայնքների 2,198 երեխայի, ինչպես նաև ջոկատավարների և պատասխանատուների համար (ճամբարային 8 հերթափոխ 7 օր տևողությամբ)՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի. <table><tr><th>№</th><th>Հերթափոխի սկիզբը</th><th>Հերթափոխի ավարտը</th><th>Մասնակիցների թիվը (ներառյալ ջոկատավարներն ու պատասխանատուները)</th><th>Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ)</th></tr><tr><td>1.</td><td>60 հուլիսի 2015թ.</td><td>13 հուլիսի 2015թ.</td><td>431</td><td>15,169,000</td></tr><tr><td>2.</td><td>13 հուլիսի 2015թ.</td><td>20 հուլիսի 2015թ.</td><td>319</td><td>10,934,000</td></tr><tr><td>3.</td><td>20 հուլիսի 2015թ.</td><td>27 հուլիսի 2015թ.</td><td>180</td><td>6,930,000</td></tr><tr><td>4.</td><td>27 հուլիսի 2015թ.</td><td>03 օգոստոսի 2015թ.</td><td>212</td><td>7,315,000</td></tr><tr><td>5.</td><td>03 օգոստոսի 2015թ.</td><td>10 օգոստոսի 2015թ.</td><td>310</td><td>10,780,000</td></tr><tr><td>6.</td><td>10 օգոստոսի 2015թ.</td><td>17 օգոստոսի 2015թ.</td><td>298</td><td>10,202,500</td></tr><tr><td>7.</td><td>17 օգոստոսի 2015թ.</td><td>24 օգոստոսի 2015թ.</td><td>298</td><td>10,202,500</td></tr><tr><td>8.</td><td>24 օգոստոսի 2015թ.</td><td>31 օգոստոսի 2015թ.</td><td>357</td><td>13,090,000</td></tr><tr><td colspan="3">Ընդամենը</td><td>2,405</td><td>84,623,000</td></tr></table> Օրագրի ընդհանուր արժեքը կազմում է 84,623,000 (ութսունչորս միլիոն վեց հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:	№	Հերթափոխի սկիզբը	Հերթափոխի ավարտը	Մասնակիցների թիվը (ներառյալ ջոկատավարներն ու պատասխանատուները)	Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ)	1.	60 հուլիսի 2015թ.	13 հուլիսի 2015թ.	431	15,169,000	2.	13 հուլիսի 2015թ.	20 հուլիսի 2015թ.	319	10,934,000	3.	20 հուլիսի 2015թ.	27 հուլիսի 2015թ.	180	6,930,000	4.	27 հուլիսի 2015թ.	03 օգոստոսի 2015թ.	212	7,315,000	5.	03 օգոստոսի 2015թ.	10 օգոստոսի 2015թ.	310	10,780,000	6.	10 օգոստոսի 2015թ.	17 օգոստոսի 2015թ.	298	10,202,500	7.	17 օգոստոսի 2015թ.	24 օգոստոսի 2015թ.	298	10,202,500	8.	24 օգոստոսի 2015թ.	31 օգոստոսի 2015թ.	357	13,090,000	Ընդամենը			2,405	84,623,000
№	Հերթափոխի սկիզբը	Հերթափոխի ավարտը	Մասնակիցների թիվը (ներառյալ ջոկատավարներն ու պատասխանատուները)	Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ)																																																
1.	60 հուլիսի 2015թ.	13 հուլիսի 2015թ.	431	15,169,000																																																
2.	13 հուլիսի 2015թ.	20 հուլիսի 2015թ.	319	10,934,000																																																
3.	20 հուլիսի 2015թ.	27 հուլիսի 2015թ.	180	6,930,000																																																
4.	27 հուլիսի 2015թ.	03 օգոստոսի 2015թ.	212	7,315,000																																																
5.	03 օգոստոսի 2015թ.	10 օգոստոսի 2015թ.	310	10,780,000																																																
6.	10 օգոստոսի 2015թ.	17 օգոստոսի 2015թ.	298	10,202,500																																																
7.	17 օգոստոսի 2015թ.	24 օգոստոսի 2015թ.	298	10,202,500																																																
8.	24 օգոստոսի 2015թ.	31 օգոստոսի 2015թ.	357	13,090,000																																																
Ընդամենը			2,405	84,623,000																																																
10	Չեղբ բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Օրագիրն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է կազմակերպություն և ամառային ջամբարի կազմակերպման պայմանագիր է կնքել «Նորալուսին» ՍՊԸ-ի հետ, որը ՀՀ Կոտայքի մարզի Հանքավան գյուղում գտնվող «Զեփյուտ» ճամբարում 8 հերթափոխով ամառային հանգիստ կկազմակերպի ընդհանուր թվով 2,405 մասնակցի համար: Կազմակերպիչն ապահովելու է հետևյալ պայմանները յուրաքանչյուր հերթափոխում ընդգրկված մասնակիցների համար. ✓ ննջարանային մասնաշենք, լվացքատուն, սանհանգույցներ, ցնցուղ ընդունելու համար առանձնացված տարածք, խոհանոց՝ բոլոր անհրաժեշտ սարքավորումներով, ճաշարան՝ անհրաժեշտ քանակի սեղաններով և աթոռներով, խաղահրապարակ, մարզահրապարակ և երեխաների ակտիվ հանգիստը կազմակերպելու համար այլ անհրաժեշտ տարածքներ և տաղավարներ. ✓ համապատասխան քանակի ննջասենյակներ՝ մեկ ննջասենյակ առավելագույնը 10-12 հոգու համար հաշվարկով. ✓ չորսանգամյա բարձրորակ սնունդ (նախաճաշ, ճաշ, հետճաշիկ և ընթրիք)																																																		

	✓ 24-ժամյա տաք և սառը ջրամատակարարում. ✓ բուժկետ՝ հազեցված համապատասխան դեղորայքով և բուժական պարագաներով. ✓ ճամբարի անվտանգությունը համապատասխան քանակի պահակային կետերի միջոցով. ✓ կազմակերպել յուրաքանչյուր հերթափոխի երեխաների համար զանազան սպորտային, մշակութային, հոգևոր միջոցառումների, արշավներ և ակտիվ հանգստի համար նախատեսված խաղեր և այլ միջոցառումներ: Օրագրի ընդհանուր արժեքը կազմում է 84,623,000 (ութսունչորս միլիոն վեց հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
11	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը Օրագրի հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ծրագիրն իրականացնելու է ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզպետարանների, ինչպես նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ համագործակցությամբ:
13	Օրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվելու է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Գյումրու, Ամասիայի, Թալինի, Ապարանի, Գավառի, Վարդենիսի, Ճամբարակի, Սիսիանի և Կապանի Տարածքային Ջարգացման Օրագրերի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱԱՀ-ի, Կանադայի, Թայվանի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակների կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային ատլիսի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Օրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունները ներկայացվել են 2015 թ. օգոստոսի 31-ի համապատասխան Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
Հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարության



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հուլիսի 2015 թվականի N Մ - 721 - Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԱՆԱՋՈՐԻ ՖԻԶԿԱՄԱԹԵՄԱ-
ՏԻԿԱԿԱՆ ԹԵՔՆՈՄԻԿ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԱՍՆԱԿԻ
ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/16721-15 և հունիսի 29-ի N 06/3-3/16808-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հունիսի 26-ի N 02/14/7663-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի հունիսի 26-ի N 03/07-1/7319-15 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2015 թվականի հունիսի 25-ի N 101/104.3.1/2665-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 703,400 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ֆիզիկամաթեմա-տիկական ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի հունիսի 4-ին կնքված N ՀՀ-Կ-11/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում նշված ՊՈԱԿ-ի ռոբոտատեխնիկայի դասասենյակում՝ 703,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-ժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«19» հունիսի 2015թ.

**«Հայաստանի Պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի
ֆիզիկամաթեմատիկական դպրոցի մասնակի կառավորում»**

ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	Ապահովել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հայաստանի Պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ֆիզիկամաթեմատիկական թեքումով ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի Ռոբոտատեխնիկայի դասասենյակը ամերաժեշտ կահույքով
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաք, կրթության բնագավառ
6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է՝ 703.400,00 ՀՀ դրամ:

2

7. Բարեգործություն ստացողը	«Հայաստանի Պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ֆիզիկամաթեմատիկական թեքումով ավագ դպրոցը
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ հունիսի 04-ից մինչև 2015թ. օգոստոսի 04-ը
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Սույն բվականի 2015թ հունիսի 04-ից մինչև 2015թ. օգոստոսի 04-ը ռոբոտատեխնիկայի դասասենյակի կառավորում՝ 703.400,00 դրամ արժողությամբ
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ապրանքատեսակների ցանկի համաձայն գույքի պորտատում, գնում, տեղափոխում և անհատույց հանձնում՝ 703.400,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Լոռու մարզպետարանի հետ
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության վերահսկողությունը իրականացվում է համագործակցության բարեգործական ծրագրերի համակարգի միջոցով (տեսանյութային և ամսական հաշվառումներ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը



7/1



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հուլիսի 2015 թվականի N Մ - 722 - Ա

քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ
ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/16771-15 և հունիսի 29-ի N 06/3-316804-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հունիսի 26-ի N 02/14/7662 -15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի հունիսի 26-ի N 03/07-1/7320-15 ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հունիսի 25-ի N 02/13/2180-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 2,538,800 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 5 դպրոցի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի հունիսի 17-ին կնքված N ՀՀ-Կ-13/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում նշված դպրոցում՝ 2,538,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

✓



«18» հունիսի 2015թ.

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 5 դպրոցի մասնակի կախավորում»

ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	Մասամբ ապահովել անհրաժեշտ կահույքով Արմավիր քաղաքի թիվ 5 դպրոցը
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, ք. Արմավիր, կրթության բնագավառ
6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 2.538.800,00 դրամ:
7. Բարեգործությունը ստացողը	Արմավիր քաղաքի թիվ 5 դպրոցը

9/2

2

8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ հունիսի 17-ից մինչև 2015թ. օգոստոսի 31-ը:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2015թ հունիսի 17-ից մինչև 2015թ. օգոստոսի 31-ը կահավորել թվով երեք դասարան՝ 2.538.800,00 դրամ արժողությամբ:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, զնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 2.538.800,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության վերահսկողությունը իրականացվելու է կառավարության բարեգործական ծրագրերի մոնիթինգի և անվտանգության կողմից (եռամսյակային և կիսամյակային հաշվառումներ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը



9/2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
24 հուլիսի 2015 թվականի N Մ - 723 - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԽԱՉԱՐԱՋԱՆ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/16764-15 և հունիսի 29-ի N 06/3-3/16803-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հունիսի 26-ի N 02/14/7664-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի հունիսի 25-ի N 03/07-1/7235-15 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի հունիսի 26-ի N 01/21.1/3034-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**


1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 7,287,800 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի դպրոցի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի հունիսի 11-ին կնքված N ՀՀ-Կ-12/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում՝ 7,287,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:


4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան



«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի դպրոցի կահավորում»

ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	Ապահովել Տավուշի մարզի Խաչարձան գյուղի վերանորոգված միջնակարգ դպրոցը անհրաժեշտ կահույքով
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Տավուշի մարզ, կրթության բնագավառ
6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է՝ 7.287.800,00 ՀՀ դրամ:

9/3

2

7. Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտներն ու ուսուցիչները
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ հունիսի 11-ից մինչև 2015թ. օգոստոսի 31-ը:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2015թ հունիսի 11-ից մինչև 2015թ. օգոստոսի 31-ը դպրոցի ամբողջական կահավորում՝ 7.287.800,00 դրամ արժողությամբ
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ապրանքատեսակների ցանկի համաձայն գույքի պատրաստում, զնում տեղափոխում և անհատույց հանձնում՝ 7.287.800,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության վերահսկողությունը իրականացվելու է համագործակցության ծրագրերի հսկողության համակարգով (եռամսյակային հաշվառություններով):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը



9/3



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
24 հուլիսի 2015 թվականի N Մ - 724 - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ
ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԳԼԽԱՎՈՐ
ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 26-ի N 07/80-2/16769 -15 և հունիսի 26-ի N 06/3-3/16656-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հունիսի 29-ի N 02/14/7774-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի հունիսի 25-ի N 03/07-1/7234-15 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2015 թվականի հունիսի 26-ի N 01/14.2/2449-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 134,181,600 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի գլխավոր մասնաշենքի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անվիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՎԱՀԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08909901) 2015 թվականի մայիսի 26-ին կնքված N ՀՀ/ԴՏ-01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 132,181,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մոդեռնիստիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00080732) 2015 թվականի մայիսի 26-ին կնքված N ՀՀՏՀ-07/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացման տեխնիկական հսկողություն՝ 1,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2015 թվականի մայիսի 26-ին կնքված N ՀՀ-05/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացման հեղինակային հսկողություն՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան



«22» հունիսի 2015թ.

**«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի գլխավոր մասնաշենքի վերանորոգում»
ԾՐԱԳԻՐ**

1.	Ծրագրի նպատակը	Բարելավել Օշական գյուղի դպրոցի ուսուցիչների և աշակերտների աշխատանքի և ուսման պայմանները
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Արագածոտնի մարզ, Օշական գյուղ, կրթության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 134.181.600,00 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցը

4/6

2

8.	Ծրագրի իրականացման տեղությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ մայիսի 26-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2015թ մայիսի 26-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 30-ը վերանորոգման աշխատանքներ՝ շինարարություն – 132.181.600,00 դրամ հեղինակային հսկողություն – 700.000,00 դրամ տեխնիկական հսկողություն – 1.300.000,00 դրամ
10.	Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՎԱՅԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Օշական գյուղի դպրոցի հիմնական մասնաշենքի վերանորոգում՝ 132.181.600,00 դրամ առանց ԱԱՀ-ի «Մոդեռնիսիացի» ՍՊԸ-ի կողմից հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 1.300.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում՝ 700.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպության ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Լիցենզավորող համագործակցություն Արագածոտնի մարզի իշխանության հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվում է վերահսկողություն իրականացվելու է ՀՀ կառավարման մարմինների կողմից (եռամսյակային եւ ամսական)



Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

4/6



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հուլիսի 2015 թվականի N Մ - 725 - Ա

քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ
ՄԱՐԶԻ ՄԵԼԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 30-ի N 07/80-2/16936-15 և հուլիսի 2-ի N 06/3-3/17287-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հուլիսի 3-ի N 02/14/7988-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 03/07-1/7530-15 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2015 թվականի հունիսի 30-ի N 01/12.1/2494-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 17,311,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մելիք գյուղի միջնակարգ դպրոցի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի հունիսի 23-ին կնքված N ՀՀ-Կ-15/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և

տեղադրում նշված դպրոցում՝ 17,311,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է



«Հայաստան» համահայկական
փոփոխության գործադիր տնօրեն
Արմա Կարդանյան

«29» հունիսի 2015թ.

«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մելիք գյուղի միջնակարգ դպրոցի կահավորում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Բարելավել Մելիք գյուղի դպրոցի ուսուցիչների և աշակերտների աշխատանքի և ուսման պայմանները
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական փոփոխում (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Արագածոտնի մարզ, Մելիք գյուղ, կրթության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 17.311.000,00 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մելիք գյուղի միջնակարգ դպրոցը

2

8.	Ծրագրի իրականացման տեղությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ հունիսի 23-ից մինչև 2015թ.սեպտեմբերի 23-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2015թ հունիսի 23-ից մինչև 2015թ.սեպտեմբերի 23-ը ներկայացված պայմանագրի թիվ 1 հավելվածի ապրանքատեսակների ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեխափոխում և անհատույց հանձնում 17.311.000,00 դրամ արժողությամբ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՍՏ» ՍՊԸ-ի կողմից Մելիք գյուղի դպրոցի կահավորում՝ 17.311.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի /գույքի ցանկը կցվում է պայմանագրին/:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության մեխանիզմները իրականացվելու է ՀՀ կառավարության բարեփոխման ծրագրի համակարգման հանձնաժողովի կողմից: Ներդրումները կազմակերպվեն և ամփոփվեն:

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական
Արմինա Դարբինյանը



9/5



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
24 հուլիսի 2015 թվականի N Մ - 726 - Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ
ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 30-ի N 07/80-2/16938-15 և հունիսի 30-ի N 06/3-3/16879-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հուլիսի 1-ի N 02/14/7891-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 03/07-1/7529-15 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2015 թվականի հունիսի 30-ի N 01/14.2/2498-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 24,488,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի հունիսի 23-ին կնքված N ՀՀ-Կ-16/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և

տեղադրում նշված դպրոցում՝ 24,488,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

